Գլխավոր տեղեկություն	
Համար	N 459-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (09.05.2019-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2019.05.08/30(1483) Հոդ.358
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	18.04.2019
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	29.04.2019
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	09.05.2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2019 թվականի N 459-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 72-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) որոշման N 3 հավելվածի N 1 ձևում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով.

«3.1) «Հայտնում ենք մեր համաձայնությունը, որ սույն դիմում-հայտարարագրով նշված չափահաս անձանց նույնականացման տվյալները տրամադրվեն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին։ Ինչպես նաև հայտնում ենք համաձայնություն առ այն, որ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն սույն դիմում-հայտարարագրով նշված նույնականացման տվյալների հիման վրա, ընտանիքի անապահովության գնահատման նպատակով, մեր վարկային պարտավորությունների վերաբերյալ մեզ տրամադրվելիք տեղեկատվությունը և գալիք մեկ տարվա ընթացքում դրա գծով փոփոխությունները՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով փոխանցի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.».

բ. վերջին աղյուսակում «Համաձայն եմ դիմում-հայտարարագրում ներառված տվյալների» բառերից հետո լրացնել «և դրույթների» բառերով.

գ. 2-րդ աղյուսակից հանել «Տեղեկանք՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված (այդ թվում՝ առևտրային բանկի մասնաճյուղի միջոցով)՝ ընտանիքի չափահաս անդամների՝ տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին (տեղեկանքն

ստանալիս պետք է առկա լինի բոլոր չափահաս անդամների կողմից տրված համաձայնությունը կամ նրանց կողմից տրված նոտարական կարգով հաստատված լիազորագիր՝ նպաստ ստանալու համար դիմող անձին՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից հարցում կատարելու վերաբերյալ)» և «Հայտարարություն՝ ընտանիքի չափահաս անդամների բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին (բանկային ավանդ ունենալու դեպքում ներկայացվում է նաև բանկի կողմից տրված տեղեկանք՝ ավանդի չափի և տվյալ հաշվետու տարվա ընթացքում դրա վրա հաշվեգրված տոկոսների մասին)» պարբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր, որը առնվազն պետք է կարգավորի հետևյալ գործընթացները՝

● անձանց նույնականացման և անձանց դիմումները փոխանցելու գործընթացը,

● համաձայնությունների ստացման կարգը,

● կողմերի պատասխանատվությունը՝ այդ թվում նշելով համաձայնությունների ստացման ու տեղեկատվության արժանահավատության պատասխանատվությունը,

● վճարման կարգը և պայմանները,

● տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման ձևաչափերը, ծավալները և բովանդակությունը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 72-Ն որոշման 2-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի օգոստոսի 6-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2019 թ. ապրիլի 29
Երևան